«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանրանկարչության հայտնի դպրոցները հայ կերպարվեստում

Առարկա՝ Կերպարվեստ

Ուսուցիչ՝ Հերմինե Գևորգյան

Դպրոց՝ Երևանի Յ և Լ Այնթապլեանների անվան հ. 87 միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Բաժին I Հայկական մանրանկարչության ընդհանուր ակնարկ----------6

Բաժին II Մանրանկարչության դպրոցները----------9

Բաժին III Մատենական նկարազարդման տեսակների արտահայտման եղանակները-16

Բաժին IV Հայկական մանրանակարներում օգտագործվող գույների խորհրդաբանությունը ----------18

Բաժին V Մանրանկարչության դերը սովորողի գեղագիտական դաստիարակության գործում---------- 18

Եզրակացություն ----------21

Օգտագործված գրականության ցանկ----------22

Հավելված ----------23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր ազգի ինքնության արտահայտության արվեստն է մանրանկարչությունը: Հայ միջնադարյան գիրքը կամուրջ է սերունդների միջև և հարուստ նյութ է մատուցում Հայաստանի պատմության, աշխարհագրության, արվեստի և այլ գիտությունների մասին: Ընդհանրապես մեր գրքային ժառանգությունը խիստ բազմազան է: Հայ արվեստում գիրքը շատ կարևոր դեր է խաղացել. այն բացի սերունդների միջև կամուրջ լինելուց, ճարտարապետական փոքր կառույց է, որում ամբողջապես արտացոլված է հայ ճարտարապետության ներդաշնակությունը: Հետաքրքրական է, որ մեր ճարտարապետական հուշարձանների արձանագրություններն ու գրքերի հիշատակարաններն իրենց բովանդակությամբ գրեթե նույնն են՝ հիշվում է կառուցման ժամանակը, իշխանական տունը, որին պատկանում է պատվիրատուն, երբեմն նաև պատմական անցուդարձը: Հազվադեպ է նշվում միայն ճարտարապետի անունը, հավանաբար նրա համար, որ եկեղեցին մշտնջենական ընծա է Աստծուն, ստեղծվում է հավատի հիմքի վրա, հետևաբար կառուցողը իր անվան հիշատակումն ավելորդ է համարել: Երկու դեպքում էլ՝ գիրք, թե եկեղեցի, գեղարվեստական նույն որակն են ներկայացնում, նույն նրբագույն ճաշակի ու խոր մտքի արտահայտությունները: Հայկական արվեստի մասին խոսելիս ավելի հաճախ անդրադառնում ենք մանրանկարչությանը, որն աչքի է ընկնում գունագեղությամբ և ոճական բազմազանությամբ, որի հնագույն նմուշները պահպանվել են Զ դարից: Ժ-ԺԱ դարերից մեզ են հասել անանուն մանրանկարիչների եզակի արժեք ներակայցնող մի քանի ձեռագրեր՝ «Էջմիածնի Ավետարան» (989 թ.), «Վեհափառի Ավետարան» (Ժ դար՝ հայտնաբերվել է 1977 թվականին), «Մուղնու Ավետարան» (ԺԱ դար), «1038 թ. Ավետարան»: «Էջմիածնի Ավետարան»-ը ունի բարձրարվեստ քանդակներով փղոսկրե կազմ և չորս մանրանկարներ՝ պահպանված Զ դարից: Գրքի կարևոր մասն են կազմում հիշատակարանները, որոնցում նշված են ծաղկողի, պատվիրատուի կամ գրչի անունները: Մեր հիշատակարաններն անանուն չեն, որովհետեւ գրիչները դիմում են Աստծուն պահպանության աղոթքով՝ նշելով իրենց ընտանիքի, զավակների անունները՝ խոր հավատով, որ իրենց աղոթքն անպայման կհասնի Աստծուն: Հիշատակարանները հարստացնում են հայկական գրքարվեստն ու մեր հիշողության գանձարանը, մի բան, որ բնորոշ չէ, օրինակ, բյուզանդական ձեռագրերին, դրանք չունեն

ընդարձակ հիշատակարաններ. գրիչը սահմանափակվում է առավելագույնը մեկ-երկու տողով:

Հետազոտության արդիականությունը: Հայկական մշակույթը եզակի է և յուրօրինակ: Այն արտացոլվում է կյանքի յուրաքանչյուր ասպարեզում՝ ճարտարապետություն, թատրոն, երաժշտություն, նկարչություն և գրականություն: Դեռևս հին ժամանակներում հայերը ստեղծել և պահպանել են իրենց մշակույթի և ավանդույթների տարբեր մասնիկներ: Հայ ժողովուրդը անսահման գնահատում, սիրում և սերնդեսերունդ փոխանցում է յուրաքանչյուր բանաստեղծություն, արվեստի գործ, կինոնկարների գլուխգործոցներ, ժողովրդական պարերի յուրաքանչյուր տարր: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ մանրանկարչությունը կերպարվեստի մի այնպիսի բնագավառ է, որը գալիս է դեռևս հնագույն ժամանակներից և հանդիսանում է ազգային արվեստի ինքնատիպ ճյուղ:

Պետք է հաշվի առնել, որ կյանքի պայմանների փոփոխությունների արագության, ժամանակակից հասարակության աշխարհայացքի և պահանջմունքների հետ կապված, ի հայտ են եկել հակասություններ մանրանկարչության հանդեպ հետաքրքրության պահանջի, դրա զարգացման և կատարելագործման ոչ բավարար ընթացքի միջև: Դրա հետ միաժամանակ մանրանկարչության վերաբերյալ ուսուցման նոր զարգացումը բերում է վերաբերմունքի վերագնահատման:

Հետազոտության օբյեկտը՝ մանրանկարչության ուսուցման գործընթացն է սովորողների շրջանում:

Հետազոտության առարկան՝ մանրանկարչության կիրառման արդիականության հաստատումն ու դրա համար համարժեք պայմանների պատրաստումն է:

Հետազոտության գիտական վարկածը՝ հետազոտության գիտական վարկածը խարսխվում է այն հիմքի վրա, որ կրթական հաստատությունում մանրանկարչության ուսուցումը կարելի է դարձնել արդյունավետ, եթե՝

- ✓ ուսումնական հաստատությունում վերամշակեն ազգային արժեքներից մեկի՝ մանրանկարչության դասավանդման տեսական և մեթոդաբանական հիմունքները,
- ✓ մշակել մեթոդներ և պատրաստվածություն, ընդհանուր կրթական համակարգում մանրանկարչության դերը և տեղը հաստատելու համար,

✓ ուսումնական հաստատությունում մանրանկարչության արդյունավետ դասավանդման համար կձևավորվեն համապատասխան մանկավարժական պայմաններ։

Հետազոտության օբյեկտի, առարկայի, նպատակի և վարկածի համապատասխան, ձևավորվում են հետևյալ <u>հետազոտության խնդիրը</u>

Ուսումնասիրել և վերլուծել կրթական հաստատություններում մանրանկար չությանը վերաբերվող ուսուցման խնդիրը՝ ուսումնասիրելով

Հետազոտությունը ներառում է մանկավարժական նոր պայմաններ, այն է՝

1. Ուսումնական հաստատությունում գիտականորեն հիմնավորվել են մանրանկարչության տեսական և մեթոդական հիմքերը:
2. Կրթական հաստատությունում որոշվել է համակարգչային մանրանկարչության դերը և տեղը:
3. Ուսումնական հաստատությունում կերպարվեստի մասնագետների գործընթացում բացահայտվել են մանրանկարչության ուսուցանելու օգտագործման եղանակները։

Հանրակրթական դպրոցներում, ժամանակակից կրթական միջավայրի պայմաններում, զարգացման և դաստիարակության գործընթացն ապահովում է յուրաքանչյուր աշակերտի ընդգրկումը տարատեսակ գործունեության մեջ, որի իրականացմամբ որոշվում է երեխայի գեղագիտական որակների արդյունավետությունը[1];

[1] 1 Рафикова О. С. Педагогическая поддержка развития самостоятельности младших школьников в процессе эстетического воспитания // Актуальные проблемы гуманитарных и естественных наук. 2011. № 5. С. 167-168:

ԲԱԺԻՆ 1 ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Հայկական ձեռագրերը արժեքավոր են նաև իրենց նկարազարդման՝մանրանկարչու-թյան շնորհիվ: Մանրանկարչությունը, որպես կերպարվեստի բնագավառ, հայտնի է եղել հնագույն ժամանակներից, սակայն վերելք է ապրել Քրիստոնեության տարածումից հետո՝ մասնավորապես Եգիպտոսում Պաղեստինում, Սիրիայում: Թեև մանրանկարչությունն անբաժան է ձեռագիր գրքից, սակայն ժամանակի ընթացքում այն ինքնուրույն զարգացում է ապրել և իր հարստության, ոճական բազմազանության, պատկերագրական և գունային ուրույն առանձնահատկությունների շնորհիվ դարձել է ազգային արվեստի մի ինքնատիպ ճյուղ:

Հայկական մանրանկարչությունը աչքի է ընկնում մոնումենտալությամբ, պատկերներում առկա դեմքերի արևելյան տիպով, տեղական տարազով, հայկական մշակույթին բնորոշ զարդարվեստով[2]: Հայերեն ձեռագրերում ամենից շատ քրիստոնեական թեմաներով պատկերազարդվել են Ավետարանները, ապա՝ Աստվածաշունչ գրքերը, կրոնական-ծիսական մյուս մատյանները: Բավական տարածված էր նաև պատվիրատուների դիմապատկերների ստեղծումը: Նկարազարդումների կարելի է հանդիպել նաև պատմագրքերում:

Հայ մանրանկարչության առայժմ հայտնի հնագույն նմուշներից է «Էջմիածնի Ավետարանի» վերջում կցված երկու թերթերի չորս մանրանկարներն են /VI դար/ : Միջնադարյան Հայաստանի կերպարվեստի մեջ մանրանկարչությունն առաջնակարգ տեղ է գրավում: Չնայած դարերի ընթացքում տարբեր նվաճողների ավերիչ արշավանքների ժամանակ վիթխարի քանակությամբ հայկական մշակութային ու գեղարվեստական արժեքներ են ոչնչացվել, այնուամենայնիվ, բավական մեծ թիվ են կազմում մեզ հասած այն ձեռագրերը, որոնք իրենց էջերում ունեն մանրանկարներ և լուսանցքազարդեր:

Շուրջ քսանհինգ հազար հին հայկական ձեռագրեր են պահպանվել ամբողջ աշխարհում: Նրանց զգալի մասը կենտրոնացված է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում: Մատենադարանի ձեռագրական հավաքածուն Ղազար Փարպեցու վկայությամբ, սկզբնավորվել է դեռևս V դարում, էջմիածնի կարողիկոսարանին կից:

Հայկական մանրանկարչության վաղ շրջանը կորչում է դարերի խորքում: Մեզ չեն հասել

[2] Հ. Գրիգորյան «Հայկական մանրանկարչություն»

հայոց գրերի գյուտից (405 թ.) անմիջապես հետո ստեղծված նկարազարդ ձեռագրերը։ Գրավոր աղբյուրներից հայտնի է, որ Հայաստանում VII դարում գոյություն է ունեցել մանրանկարչական, այսպես կոչված է «Կամսարականների» դպրոցը, սակայն, դժբախտաբար, այդ դպրոցից և ոչ մի հուշարձան չի պահպանվել։ Հայկական մանրանկարչության ամենահին նմուշը թվագրվում է մոտավորապես VI դարից (ԼՔ Դուռնովո), մինչդեռ ստույգ թվական ունեցող ամենահին ձեռագիրը՝ Լազարյան ավետարանը, գրված է 887 թվականին։ Եթե VI–IX դարերից մանրանկարներով ձեռագրեր քիչ են պահպանվել, ապա համեմատաբար ուշ շրջաններում ստեղծված մանրանկարչական հուշարձանները բազմաթիվ են։

Մատենադարանի հայկական ձեռագրերի հավաքածուն ամենամեծն է ոչ միայն քանակով, այլև շատ նշանակալից է գեղարվեստական տեսակետից մեծարժեք մի շարք ձեռագրերի առկայությամբ։ Հռչակավոր Էջմիածնի ավետարանից (989 թ.) բացի, Մատենադարանում պահվում են 1038 թվականի ավեր տարանը, XI դարի կեսերի Մողնու ավետարանը, 1211 թվականի Հաղպատի ավետարանը, 1232 թվականի Թարգմանչաց ավետարանը և XIII դարի երկրորդ կեսի կիլիկյան մի շարք ձեռագրեր, որոնց թվում և՝ ձեռագրական մանրանկարչության այնպիսի մի գլուխգործոց, ինչպիսին է Հեթում Բ թագավորի 1286 թ. « Ճաշոցը» և շատ ուրիշ ձեագրեր։

Հայ միջնադարյան մանրանկարչական արվեստում զգալի տեղ են գրավում կենդանական զարդապատկերները։ Դրանց արմատները շար խորն են։ Հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կենդանական աշխարհը վերարտադրող հարուստ նյութ են պարունակում հայկական լեռնաշխարհում պահպանված ժայռապատկերները։ Դրանք՝ Հայաստանում բնակված վայրի և ընտանի տարատեսակ կենդանիների պատկերներ են կապված նախնադարյան մարդու պաշտամունքի կենցաղի հետ։ Հարթաքանդակների զգալի մասը ունի նաև գեղագիտական արժեք, որի հիման վրա կարելի է ասել, թե ինչպես հին աշխարհի շատ ժողովուրդների, այնպես էլ մեր արվեստի պատմությունն սկսվում է ժայռապատկերներից։

Կենդանական աշխարհի մասին հարուստ նյութ են պարունակում պեղումներից հայտնաբերված մ.թ.ա. պաշտամունքի կիրառական առարկաները։

IX-Xդարերում արդեն մանրանկարչությունը Հայստանում բավական բարձր մակարդակ ուներ։ Իսկ XI դարից, որը Բագրատունյաց վերելքի շրջանն էր մենք ունենք ավելի մեծ թվով

նկարազարդ ձեռագրեր: Դրանց մեջ հատկապես նշանավոր է «Մուղնու» ավետարանը, Հայ մանրանկարչության առավելագույն վերելքի ժամանակաշրջան է համարվում 13-րդ դարը, մասնավորապես Կիլիկյան մանրանկարչությունը: Այն աչքի է ընկնում պատկերների ընդհանուր ճոխությամբ ոսկու առատ օգտագործմամբ, ինչը պայմանավորված էր մասմբ ձեռագրերի պատվիրատուների ֆինանսական հնարավորություններով: Ձեռագրերը ստեղծվել և տարածում են ունեցել հիմնականում թագավորական ընտանիքներում, ազնվականության և բարձրաստիճան հոգևորականության միձավայրում:
Կիլիկիայի նշանավոր մանրանկարիչներից են Գրիգոր Սկևռացին, Թորոս Ռոսլինը, Գրիգորն ու նրա որդի Սարգիս Պիծակը և ուրիշներ:
Ինքնատիպ մանրանկարչական դպրոց է ձևավորվել XIII դարի վերջերին և XIV դարի սկզբներին հայ միջնադարի հռչակավոր համալսարանում՝ Գլաձորում: Այստեղ ստեղծագործող արվեստագետներն էին Թորոս Տարոնացին, Ավագը, Մոմիկը, վերջինս նաև շնորհալի ճարտարապետ և քանդակագործ էր:
Գեղանկարչական միանգամայն ինքնատիպ ուղղություն է ներկայացնում Վասպուրականի մանրանկարչության դպրոցը, որի գործունեության հիմնական շրջանը XV-XVI դարերն են: Այստեղ պատկերներն ավելի պարզ են, հիմնականում չեն օգտագործվում գունային ֆոն, ոսկի, կիրառվում են լոկալ գույներ, ընդունված էր նայն պատկերների մոտ գրել նրանց ով լինելը: Ոճի և հարդարանքի պարզությունը մասամբ պայմանավորված էր նաև պատվիրատուների ցանկությամբ որոնք միջին խավի մարդիկ էին կամ նյութապես ոչ շատ ապահովված: Այս դեպքում, ի հակադրություն Կիլիկյան մանրանկարչության, ձառագիր գիրքը ձեռք են բերել ժողովրդական բնույթ և հասանելի են եղել հասարակության լայն խավերին և պատահական չէ նաև որ Վասպուրականի մանրանկարչությունը ուսումնասիրողները համարում են ժողովրդական արվեստի արտացոլում:
Վասպուրականի նկարազարդողներից են՝ Զաքարիա Ավանցին, Հովահննես Ֆրիզանցին, Սիմիոն Արտիշեցին, Ռստակեսը, Մինասը, և ուրիշներ:

ԲԱԺԻՆ 2 ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Փոքր Հայքի մանրանկարչության դպրոց:

XI դարում՝ Մեծ Հայքում, նույն դարի 2-րդ կեսից նաև Փոքր Հայքում ստեղծված ձեռագրերում [Անի-Արշարունիքի և Փոքր Հայքի ու Մալաթիայի (Մելիտենե)] շարունակվել է Մլքե թագուհու (պահպանվել են հելլենա-քրիստոնեական արվեստի առավել արժեքավոր առանձնահատկությունները) և Էջմիածնի Ավետարանների պատկերազարդման տիպը:
XI դարի հայկական առաջին պատկերազարդ ձեռագրերից է «Ադրիանուպոլսի Ավետարանը» (1007 թ., գրիչ՝ Կիրակոս Երեց), որտեղ ավետարանիչների և «Աստվածամայրը մանկան հետ» նկարները գույներով ու նուրբ համամասնություններով հիշեցնում են նույն շրջանի բյուզանդական որմնանկարների ոճը: Կղոտ գավառի (Եփրատի ափին) Թալաշա վանքում 1018 թ-ին ընդօրինակված մի ձեռագրում պատկերված 4 ավետարանիչների դեմքերը հիշեցնում են Աղթամարի վանքի Սբ Խաչ եկեղեցու որմնանկարների դեմքերը: X-XI դարերի այդպիսի ձեռագրերի գլուխգործոց է 1038 թ-ի Ավետարանը (գրիչ՝ Եվարգրիս, Մատենադարան), որը ոճով մոտ է «Ծուղրութի Ավետարանին» (974 թ.) և «Վեհափառի Ավետարանին» (X դարի վերջ — XI դարի 1-ին կես), որտեղ պահպանվել է ասորա-պաղեստինյան վաղ քրիստոնեական պարզագույն ոճը:
1041 թ-ին Սեբաստիայում ընդօրինակված «Մալաթիայի Ավետարանի» (Երուսաղեմի Սբ Հակոբյանց վանքի մատենադարան) և 1057 թ-ի մի ձեռագրի (Մատենադարան, ձեռագիր դ 3784) տերունական նկարաշարերն ավարտվում են 4 ավետարանիչների և խաչի պատկերներով: Խորանները փոխել են իրենց ճարտարապետական տեսքը, մեկ ամբողջական էջին (նույն շրջանակում) պատկերվել է 2 տեսարան, որոնք կառուցվածքով հիշեցնում են X-XI դարերի կապադովկյան որմնանկարները: Մարդկանց և առարկաների պատկերները խիստ պայմանական են և սխեմատիկ: Փոքր Հայքի ձեռագրերի խորանները զարդարված են բուսական և երկրաչափական մոտիվներով, թռչուններով ու հուշկապարիկներով (առասպելական ոգիներ):

Անիի մանրանկարչության դպրոց:

Ձևավորվել է XI-XIV դարերում՝ Անիի գրչատներում և մերձակա մշակութային օջախներում (Հոռոմոսի, Բագնայրի, Արջո Առիճի վանքերում): Ունեցել է աշխարհիկ ուղղվածություն. ձգտել է ավանդույթները հարստացնել կյանքի ու կենցաղի տարրերով:

XI դարի սկզբին Անիում են աշխատել Թադեոս գրիչը, Գրիգոր Մուրղանեցի գրիչը, Գևորգը և ուրիշներ: XII դարի վերջին Հռոմոսի վանքում է ստեղծագործել մանրանկարիչ Հովհաննեսը, որից մեզ է հասել 3 Ավետարան. ամենաշքեղը «Մողնու Ավետարանն» է (XI դարի կես, Մատենադարան)՝ խորաններով, ընդարձակ տերունական նկարաշարով, յուրահատուկ հեռանկարչական համակարգով: Մանրանկարների գույները փայլատ են ու մեղմ, հարուստ՝ արևելաքրիստոնեական մոտիվներով:
Անիում հույների ներկայությունն արտացոլված է 1053 թ-ի Ավետարանի, «Բեգյունց Ավետարանի» (1060 թ.) և ավետարանիչների պատկերներում, հունական անվանատառերում: XII դարի վերջի — XIII դարի սկզբի Անիի դպրոցներից պահպանվել է Իգնատիոս մանրանկարչի ծաղկած մի քանի ձեռագիր («Բագնայրի Ավետարանը», 1232 թ., 1236 թ-ի Ավետարանը և այլն): Առանձին խումբ են «բյուզանդամետ» համարվող «Տրապիզոնի Ավետարանը» (XI դարի 1-ին կես), «Կարսի Ավետարանը» (XI դար), 1071-78 թթ-ի Ավետարանները (Մատենադարան, ձեռագիր դդ 6975, 10434): XI դարի մատյանները մեծ մասամբ խոշոր են, իսկ XII դարի մատյանները՝ ավելի փոքր: Այդ շրջանի ձեռագրերի ձևավորումը համեստ է:
XII դարում սկզբնավորվել է Ճառընտիրների (Տոնականներ, Մատենադարան, ձեռագիր դդ 3777, 1522, 3782 և այլն), ժողովածուների և մեկնությունների ձևավորման համակարգը, որին բնորոշ են մեծ չափերը, լայն լուսանցքները, արագագիր ոճը:
Մանրանկարչությունն Անիում վերելք է ապրել XIII դարի 1-ին կեսին: Մանրանկարիչ Մարգարեն Անիի Բեխենց վանքում պատկերազարդել է «Հաղպատի Ավետարանը» (1211 թ.), որը Անիի դպրոցին ամենաբնորոշ ստեղծագործությունն է: 1298 թ-ին գրիչ Եղբայրիկն ընդօրինակել ու ծաղկել է մի ձեռագիր, որի տերունական և ավետարանիչների կերպարներն ստեղծել է Խաչատուրը: Անիում է ձևավորվել մանրանկարիչ Մխիթար Անեցու արվեստը: Անիի դպրոցից մեզ հասած վերջին ձեռագրի հեղինակը գրիչ Հովհաննես Ոսկեփորիկն է (XIV դար):

<u>Կիլիկիայի մանրանկարչության դպրոց</u>:
XII դարում Կիլիկիայի Հռոմկլա բերդաքաղաքը հռչակվել է ուրույն և բարձրարվեստ մանրանկարչության դպրոցով: Նրա վաղ շրջանի պատկերազարդ ձեռագրերը մեզ չեն հասել: 1113 թ-ին Դրազարկի վանքում պատկերազարդված ձեռագրում (Մատենադարան,

ձեռագիր դ 6763) ակնհայտ է Մեծ Հայքի մանրանկարչության ավանդույթների ազդեցությունը, իսկ կիլիկյան գրքարվեստի հատկանիշներից՝ լուսանցքում սրտաձև արմավազարդը՝ հավասարաթև խաչով, հիմնական գույները կարմիրը, կապույտն ու կանաչն են:

XII դարի վերջին կիլիկյան մի քանի ընտիր ձեռագրեր կապված են Ներսես Լամբրոնացու և նրա հովանավորած Սկևռայի վանքի հետ. առանձնանում է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի պատկերազարդ ձեռագիրը (1173 թ., Մատենադարան, ձեռագիր դ 1568), որի գրիչը Գրիգոր Մլիճեցին է, պատվիրատուն (ստացողը)՝ Ներսես Լամբրոնացին: Վերջինիս պատվերով մեզ հասած մյուս գլուխգործոցը «Սկևռայի Ավետարանն» է (1197 թ.), որտեղ լուսանցանկարները՝ տերունական թեմաների համառոտումով, զուտ կիլիկյան երևույթ են:

XIII դարի Հռոմկլայի դպրոցից մեզ հասած առաջին պատկերազարդ ձեռագրերը Ավետարաններ են (1249 թ., գրիչ՝ Կիրակոս, Մատենադարան, ձեռագիր դ 7690, 1251 թ., գրիչ՝ Սարգիս, Մատենադարան, ձեռագիր դ 3033, և այլն), որոնք հիմնականում հետևել են XII դարի ավանդույթներին. նորությունը նրբագույն զարդամոտիվների հարստությունն է, խորանների վերևում և լուսանցքներում պատկերված են աքաղաղներ, մոմակալներ, սիրամարգեր, նռնենիներ ու արմավենիներ, սափորներից ելնող բուսազարդեր և այլն: Հռոմկլայի դպրոցի խոշորագույն մանրանկարիչ Թորոս Ռոսլինից հետո՝ 1270-ական թվականներին, արքայական ընտանիքի անդամների համար ստեղծվել են մի շարք ճոխ ձեռագրեր: «Վասակ իշխանի Ավետարանում» (XIII դարի 2-րդ կես, գրիչ՝ Ավետիս) և «Կեռան թագուհու Ավետարանում» (1272 թ., գրիչ՝ Ավետիս) ընծայագրերին փոխարինել են պատվիրատուների ընտանիքների անդամների պատկերները՝ «Դեիսուսի» («Բարեխոսություն»), Աստվածամոր ու Քրիստոսի կերպարներով:

«Հեթում Բ թագավորի Ճաշոցը» (1286 թ.), «Ութ մանրանկարիչների Ավետարանը» (նկարազարդել են XIII դարի վերջին քառորդի անհայտ նկարիչներ, 1320 թ-ին՝ Սարգիս Պիծակը, գրիչ՝ Ավետիս), Մատենադարանի 2 Ավետարանները (ձեռագիր դդ 9422, 2629) հարուստ են զարդային, սյուժետային և ֆիգուրատիվ նկարներով, գեղարվեստական միջոցների բազմազանությամբ, լուսագունային երանգավորմամբ: Գոների և Ակների վանքերի Հովհաննես Արքաեղբոր մանրանկարչության դպրոցում են ստեղծվել Աստվածաշունչը (1263-66 թթ., Մատենադարան, ձեռագիր դ 4243), մեզ հասած առաջին

աստվածաշնչյան գրքերից մեկը (1270 թ., Մատենադարան, ձեռագիր դ 345), 1287 թ-ի Ավետարանը (Մատենադարան, գրիչ՝ Հովհաննես Արքաեղբայր, ձեռագիր դ 197) և այլն: «Հովհաննես Արքաեղբոր Ավետարանը» (Մատենադարան, ձեռագիր դ 197) ոճական առումով, տերունական պատկերների հորինվածքային բարդությամբ ավելի մոտ է արքունական դպրոցի մանրանկարչական արվեստին:

XIII դարի վերջին տասնամյակին Կիլիկյան Հայաստանի գրչարվեստը դեռևս իր բարձրության վրա էր, սակայն մանրանկարչությունը կրել է որոշակի փոփոխություններ: 1292 թ-ի «Հեթում Բ թագավորի Աստվածաշնչում» Ստեփանոս գրիչը (հավանաբար՝ նաև նկարիչը) հետևել է արքունական դպրոցի շքեղ ոճին. ստեղծել է նոր սխեմատիկ ոճ, որի ցայտուն արտահայտողը Սարգիս Պիծակի հայրն է՝ Գրիգորը:

<u>Բարձր Հայքի և Արցախի մանրանկարչության դպրոցներ:</u>

Սելջուկյան ճնշումներից համեմատաբար ազատ բուն Հայաստանի արևմտյան մասերում (Բարձր Հայք, Խարբերդ և այլն) և Հայաստանից դուրս՝ հայաբնակ վայրերում (Եդեսիա, Երուսաղեմ և այլն) ստեղծված բարձրորակ ձեռագրերից է «Մշո Ճառընտիրը» (1200-02 թթ., գրիչ՝ Վարդան Կարնեցի, ծաղկող՝ Ստեփանոս)՝ հայերեն ամենամեծ մագաղաթե մատյանը (55,5 սմ x 70,5 սմ, քաշը՝ 28 կգ): Բարձր Հայքի Երզնկա քաղաքում ստեղծված գլուխգործոց է 1269 թ-ին ընդօրինակված և մեզ հասած առաջին ամբողջական պատկերազարդ Աստվածաշունչը՝ «Երզնկայի Աստվածաշունչը» (գրիչներ՝ Մխիթար, Հակոբ և Մովսես), որի խորանների, անվանաթերթերի, սյուժետային պատկերների գծային նրբագեղությունը մոտ է կիլիկյան Աստվածաշունչ և այլ մատյանների: Տերունական նկարներով հատկապես առանձնանում է «Թարգմանչաց Ավետարանը» (1232 թ., գրիչ՝ Տիրացու, ծաղկող՝ Գրիգոր), որը գունային հակադրությունների դրամատիզմով կարող է համեմատվել X-XI դարերի Օթոնյան (գերմանական արքայատոհմ Հռոմեական սրբազան կայսրության մեջ) շրջանի գերմանական ձեռագրերի հետ:

Արցախի վանքերում բազմաթիվ ձեռագրեր են հավաքվել Հայաստանի տարբեր վայրերից, սակայն այնտեղ պատկերազարդված սակավաթիվ ձեռագրեր են պահպանվել: 1224-61 թթ-ին Արցախում ստեղծված մի քանի Ավետարաններ լավ մշակված մագաղաթներով, մանրանկարների ոճով, ոսկու և գույների նրբությամբ, կառուցվածքով և տիտղոսաթերթերի հորինվածքով մոտ են մանրանկարիչ Իգնատիոսի՝ Անիում ստեղծած ձեռագրերին:

Արցախից հայտնի են 1224 թ-ի Խորանաշատի (Վանենի թագուհու) Ավետարանը (Մատենադարան, ձեռագիր դ 4823), Հասան-Ջալալյան իշխանի հայր Վախթանգ Տանգիկի և նրա տիկնոջ՝ Խորիշահի Ավետարանը (ծաղկող՝ Թորոս, Մատենադարան, ձեռագիր դ 378):

Գլաձորի մանրանկարչության դպրոց:

Գործել է Գլաձորի համալսարանին կից գրչատանը, XIII դարի վերջից մինչև XIV դարի կեսը: Այստեղ են ստեղծագործել 3 նշանավոր մանրանկարիչներ Մոմիկը, Թորոս Տարոնացին և Ավագը: Գլաձորի մանրանկարչության դպրոցն առավել սերտորեն է առնչվել մոնումենտալ արվեստին և մշակույթի այլ բնագավառների (քանդակագործություն, ճարտարապետություն), քան գրքարվեստի մյուս դպրոցները: Թորոս Տարոնացու ծաղկած ձեռագրերի խորանները, լուսանցազարդերը և անվանաթերթերի զարդամոտիվները մեծ մասամբ կրում են կիլիկյան դպրոցի ազդեցությունը: Կիլիկյան ակունք ունի նաև որոշ ձեռագրերում (1318 թ-ի «Եսայի Նչեցու Ավետարանը», Մատենադարան, ձեռագիր դ 206, XIV դարի սկզբի Ավետարանը, Լոս Անջելեսի համալսարան, և այլն) Աստվածաշնչի կամ Ավետարանի յուրաքանչյուր դրվագ նկարազարդելու ձգտումը: Տերունական նկարներում ավելի ուժեղ են Մեծ Հայքի տարբեր դպրոցների ազդեցությունները:
Գլաձորի մանրանկարչության դպրոցի վերջին վարպետը՝ Ավագը, սկզբում կրել է Մոմիկի և Թորոս Տարոնացու ազդեցությունը, հետագայում հասել է հոգեբանական ավելի մեծ արտահայտչականության: Նա խուսափել է բազմապլանայնությունից, Սարգիս Պիծակի նման կերպարներն ու մոտիվները (զարդեր, բնություն և այլն) բերել է մի հարթություն: Ավագն իր արվեստում օգտվել է և՛ կիլիկյան, և՛ գլաձորյան դպրոցների ավանդույթներից:

Տաթևի մանրանկարչության դպրոց:

Գործել է Տաթևի համալսարանում (XIV դարի վերջից): Շարունակելով Գլաձորի դպրոցի ավանդույթները՝ դրանք հարստացրել է մոնումենտալ ոճի տարրերով (Գրիգոր Տաթևացու և նրա աշակերտի մանրանկարները՝ 1378 թ-ին ծաղկած Ավետարանում, որը գրվել է 1297 թ-ին, Մատենադարան, ձեռագիր դ 7482):
Տաթևի դպրոցի XV դարի սկզբի նկարիչներից էր Հայրապետը, որի նկարազարդած 1407 թ-ի

Ավետարանից պահպանվել է միայն հիշատակարանը (Մատենադարան, պատառիկ 923): Լավագույն ձեռագրերից է նաև նրա ընդօրինակած Հայսմավուրքը (Մատենադարան, ձեռագիր դ 7361), որի զարդանկարներն առանձնանում են նրբությամբ ու գունագեղությամբ, դիմապատկերները՝ գեղանկարչական վարպետությամբ: 1496-1502 թթ-ին Աբրահամ ծաղկողը Տաթևում պատկերազարդել է 1495 թ-ին ընդօրինակված Ավետարանը (Մատենադարան, ձեռագիր դ 5303):

Տաթևի դպրոցում նկարազարդվել են նաև բազմաթիվ այլ մատյաններ, որտեղ չկան թեմատիկ նկարներ, հարդարված են կիսախորաններով ու լուսանցազարդերով, մեծ մասամբ՝ գրաֆիկական ոճավորմամբ:

<u>Վասպուրականի մանրանկարչության դպրոց:</u>

Առավել նշանավոր էր XII-XV դարերում: Այստեղ թարգմանվել և ընդօրինակվել է ավելի քան 2 հզ. ձեռագիր, մի մասը՝ նկարազարդ: Մեզ հասած թեմատիկ նկարներ ունեցող առաջին ամբողջական մատյանը «Մլքե թագուհու Ավետարանն» է (IX դար, Վենետիկի Մխիթարյան մատենադարան, ձեռագիր դ 114/86), որն ընդօրինակվել է 862 թ-ին, Վասպուրականում: Մյուս մատյաններն ստեղծվել են X-XI դարերում (Ավետարաններ, Մատենադարան, ձեռագիր դդ 10434, 10517), որոնց նկարներն Արծրունյաց թագավորության քաղաքական կյանքի և մշակույթի վերելքի արտահայտությունն են:

XI դարի 30-40-ական թվականներից, սելջուկյան արշավանքների հետևանքով, մշակույթի առաջընթացն ընդհատվել է, և միայն XIII դարի 70-ական թվականներից է սկսվել ձեռագրերի ընդօրինակման ու պատկերազարդման նոր փուլը՝ Արճեշի, Արծկեի, Բերկրիի գրչության կենտրոններում: Հիմնականում պահպանվել են ազգային տեղական ավանդույթները (Սիմեոն Արճիշեցի, Խաչեր, Հովսիան, Մելքիսեդեկ, Վարդան Արծկեցի, Ստեփանոս), փոխվել է մանրանկարների կերպարային և ոճական ընդհանուր պատկերը:

XIII-XIV դարերում, մանրանկարների ընդհանուր ոճի դրսևորումներին զուգահեռ, կարևորել են նաև դեկորատիվ-հարթապատկերային ձևերը: Դպրոցի վերելքի շրջանում բյուրեղացել ու ավարտուն տեսք է ստացել մանրանկարչության ոճը, աշխույժ գործունեություն է ծավալվել Աղբակում, Աղթամարում, Խիզանում, Նարեկում, Խլաթում և մյուս կենտրոններում: Վասպուրականի դպրոցին բնորոշ ուշագրավ նմուշներ է ստեղծել Կիրակոս Աղբակեցին [1318-19 թթ-ի (ձեռագիր դ 4817), 1330 թ-ի (ձեռագիր դ 2929) և այլ Ավետարաններ,

Մատենադարան]: Նրան հաջորդել են Զաքարիա Աղթամարցին (պատկերազարդած ձեռագրերից 14-ը Մատենադարանում են), Ծերուն Ծաղկողը (Մատենադարանում են 5 ձեռագիր, 1 ճառընտիր), Հովհաննես Խիզանցին (1401 թ-ի Ավետարանը, Մատենադարան, ձեռագիր դ 4223, և այլն) և ուրիշներ: XV դարի վերջից տեղական ավանդական ձևերը կորցրել են իրենց կենսունակությունը, իսկ XVII դարի վերջից Վասպուրականի դպրոց են թափանցել նոր ժամանակների միտումներն ու նախասիրությունները:

Ղրիմի մանրանկարչության դպրոց:

Նշանավոր կենտրոններն էին Սուրխաթը (այժմ՝ Ստարի Կրիմ) և Կաֆան (այժմ՝ Թեոդոսիա), որտեղ ստեղծագործել են Գրիգոր Սուքիասանցը, Առաքելը, անվանի գրիչ Նատերի որդիներ Ավետիսն ու Ստեփանոսը, վերջինիս որդի Հովհաննեսը: Ղրիմի դպրոցի լավագույն ձեռագրերից են Առաքելի պատկերազարդած Ճաշոցը (1356 թ., Մատենադարան, ձեռագիր դ 7408) և Հովհաննեսի պատկերազարդած Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը (1401 թ., Մատենադարան, ձեռագիր դ 3863):

Սուրխաթի, Կաֆայի, Ղարասուբազարի (այժմ՝ Բելոգորսկ) գրչության կենտրոններն ակտիվ շփվել են իտալացիների և հույների հետ, ուստի՝ հայ մանրանկարիչների գործերում ակնհայտ է ոչ միայն կիլիկյան և Մեծ Հայքի դպրոցների, այլև XIII-XIV դարերի բյուզանդական արվեստի ազդեցությունը: XVII դարի Ղրիմի մանրանկարիչներից են Խասպեկը (1666 թ-ի Ավետարան, Մատենադարան, ձեռագիր դ 6606), Նիկողայոս Ծաղկարարը (1684 թ-ի Ավետարան, Մատենադարան, ձեռագիր դ 6341) և ուրիշներ:

Նոր Ջուղայի մանրանկարչության դպրոց:

Խոշոր ներկայացուցիչը Հակոբ Ջուղայեցին է. պահպանվել են նրա պատկերազարդած 8 ձեռագրերը, որոնցից 6-ն Ավետարան են: Նա, շարունակելով Վասպուրականի դպրոցի ավանդույթները, ստեղծել է նոր որակ:

XVII-XVIII դարերում, հայ գրքի տպագրական մշակույթի զարգացմանը զուգընթաց, մանրանկարչությունն աստիճանաբար իր տեղը զիջել է գրքի պատկերազարդման տպագրական արվեստին:

ՀՀ-ում 1992 թ-ից նորաստեղծ հայորդաց տների համակարգում գործում են մանրանկարչության դասարաններ, 1993 թ-ից՝ Մանրանկարչության արվեստի կենտրոնը:

ԲԱԺԻՆ 3 ՄԱՏԵՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԶԱՐԴՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Նկարազարդմանը կամ գեղանկարչության ու գծանկարի օգնությամբ ձեռագիր տեքստը մեկնաբանելու միջոցին դիմել են բոլոր ժողովուրդները իրենց գրերի գյուտից անմիջապես հետո, հաճախ էլ գեղանկարչությունը նույնիսկ մասնակցել է այբուբենի ստեղծմանը: Այդպես է վարվել և հայ ժողովուրդը, երբ իր ժամանակի խոշորագույն գիտնական Մեսրոպ Մաշտոցը 405 թվականին հայտնագործել է հայոց այբուբենը: Սեփական գրականության պահանջը այնքան մեծ է եղել ժողովրդի մեջ, որ արդեն V դարում հայերեն թարգմանվել ու գրվել են ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ, պատմական բովանդակություն ունեցող և գիտության տարբեր բնագավառներին վերաբերող բազմաթիվ գրքեր: Ձեռագրերի այդօրինակ առատությունը պետք է հանգեցներ ինչպես տեքստի նկարազարդման, այնպես էլ՝ դրվագավոր ծաղկումի: Մանավանդ որ քրիստոնեությունը հիմնականում Հայաստան էր թափանցել Ասորիքից, որտեղ դեռևս VI դարում կային ձեռագրական գեղանկարչության հուշարձաններ (Ռաբուլայի 586 թ. ավետարանի և այլն), որոնք անտարակույս առաջինները չէին:

Ահա թե ինչու 887 թվականի Լազարյան ավետարանը, որ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, կարելի է համարել հայ գրքային գեղանկարչությունից մեզ հասած սոսկ առաջին թվագրված, բայց ոչ երբեք առաջին հուշարձանը: Իսկական առաջնեկը մենք, իհարկե, այլևս երբեք չենք տեսնի, բայց Լազարյան ավետարանից բավական վաղ կատարված նկարազարդումներից որոշ բան զետեղված է Էջմիածնի 989 թվականի ավետարանի վերջում: Այստեղ երկու թերթի վրա զետեղված է չորս տեսարան (Մարիամի Ավետումը Զաքարեի Ավետումը, Մոգերի երկրպագությունը և Մկրտությունը):

Այդ մանրանկարները հայ գեղանկարչության վաղ շրջանի հուշարձաններ համարելուն խանգարում էր այն բավական տարածված կարծիքը, թե Հայաստանում, նրա քաղաքական և, հետևաբար, տնտեսական ողբալի պայմանների պատճառով, հազիվ թե արվեստները կարողանային ունենալ շատ լայն ինքնուրույն զարգացում: Սակայն վերջին տարիներս որմնանկարչության, խեցեգործության, քարափորագրության և այլ բնագավառներում կատարված ուսումնասիրու

թյունները հարկադրեցին հրաժարվել այդ կանխակալ կարծիքից և ընդունել Հայաստանի արվեստների բարձր մակարդակը վաղ Ֆեոդալիզմի դարաշրջանում: Միջնադարի հայ մանրանկարչի զարդարվեստային մտածողության դիապազոնը բացառիկ կերպով լայն է, անսպառ և բազմակողմանի: Նրա նրբին ճաշակը ձևեր ստեղծելիս չէր հանդուրժում , սխեմայի անորոշություն, մասերի չափային անհամապատասխանություն, և նույնիսկ բազմաթիվ մոտիվներից բարդ նկար կառուցելու դեպքերում համաչափությունն ու պարզությունը չէին կորչում: Երկրաչափական և գերազանցապես բուսական ձևեր գործածելուց բացի, նկարիչները զարդարվեստային հորինվածքի մեջ առատորեն մտցնում և շուրջը տեղավորում էին անսահմանորեն բազմազան իրական և առասպելական կենդանիներ: Գեղանկարչության ամենավաղ հուշարձանների՝ Էջմիածնի ավետարանի վերջում պահպանված մանրանկարների, V և VII դարերի որմնանկարչության (Քասախ, Տեկոր, Լմբատ, Առուն Թալին) ժամանակը համընկնում է նախարարական Հայաստանի համեմատաբար խաղաղ ժամանակաշրջանի հետ, երբ վարչական ու մշակութային կենտրոնը Դվինն էր: Այս շրջանը տևեց մինչև VII դարի վերջը. այսինքն մինչև Հայաստանի ամբողջական նվաճումը արաբների կողմից: Կասկածից դուրս է, որ մշակութային կյանքը արաբների լծի տակ ամբողջովին չի ընդհատվել, թեև, մինչ IX դարի երկրորդ կեսը ստեղծված հուշարձանները չեն պահպանվել: Հայկական ձեռագրական գեղանկարչությունը իր բացառիկ ինքնատիպությամբ, խորաթափանցությամբ և ստեղծագործական ներշնչվածությամբ, կոմպոզիցիոն և զարդանկարչական հորինվածքների գեղեցկությամբ համաչափությամբ, գույների ներդաշնակությամբ, ինչպես նաև կատարման փայլուն մաքրությամբ ու վարպետությամբ իր ուրույն տեղն ունի գեղարվեստի համաշխարհային գանձարանում

ԲԱԺԻՆ 4 ՀԱՅԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՈՒՅՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. **Ոսկի կամ դեղին** Աստծո և արքայության գույնն է
2. **Ասիստ** Աստծո ներկայության, իմանալի լույսի գծային նշանակ
3. **Ծիրանի** Հաճախ օգտագործվում է Հիսուս Քրիստոսի ու Աստվածամոր հանդերձները գունավորելիս. արքայական գույն
4. **Կարմիր** Զոհաբերության ու հարության գույն
5. **Սպիտակ** Սրբության, հոգևոր մաքրության գույն
6. **Կապույտ** Երկնքի և Աստվածամոր գույն
7. **Կանաչ** Հոգևոր կենդանության ու նորոգության գույն

ԲԱԺԻՆ 5 ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գեղեցիկը բոլոր ժամանակներում համարվել է նաև իրականության կարևորագույն, ամենահետաքրքիր ու զարմանալի երևույթներից մեկը, որի ճանաչումը, իմացությունը եղել է մարդկային գործունեության (ճանաչողության) հիմնական նպատակներից մեկը: Եվ, բնականաբար, գեղեցիկի ձևավորումը բոլոր ժամանակ ներում եղել է նաև սերունդների դաստիարակության կարևորագույն բաղադրիչ: Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղագիտական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց դրանց ձևավորվումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղագիտական դաստիարակության բաղադրիչով[3]:

Գեղագիտական դաստիարակությունը ավելի լայն հասկացություն է, քան

[3] Միքայելյան Համլետ, Գեղագիտական դաստիարակությունը և մաթեմատիկական կրթությունը, <<Մաթեմատիկան դպրոցում>>, Գիտամեթոդական ամսագիր, Թիվ 4(107), 2016, էջ 3-18:

գեղարվեստական դաստիարակությունը: Վերջինս կազմում է գեղագիտական դաստիարակության կարևորագույն մասը միայն[4]: Գեղագիտական դաստիարա - կությունը օգնում է ձևավորելու նոր մարդու ամբողջական անձնավորությունը՝ իբրև իր բարոյական մտքերով ազնիվ մարդու, որ կարողանում է տեսնել ու գնահատել գեղեցիկը կյանքում, ամենատարբեր բնույթի գործունեության մեջ, որ պայքարում է հանուն գեղեցկության: Մանրանկարչությունը կերպարվեստի այն բնագավառն է, որը որը մեծ դեր ունի սովորողի գեղագիտական դաստիարակության գործընթացում: Սովորողի մոտ մանրանկարչության նկատմամբ նոր վերաբերմունքի ձևավորումը, հետաքրքրությունների խթանումը, գնահատումը որպես ազգային արվեստի ինքնատիպ ճյուղ՝ մեկ քայլ է դեպի ազգի ինքնության արտահայտման: Այս ամենին հասնելու համար կրթական հաստատություններում մանրանկարչության ուսուցումը հարկավոր է դարձնել առավել արդյունավետ՝ փոխելով տեսական և մեթոդական մոտեցումները, մշակել նոր մեթոդներ ու հնարներ, ձևավորել դասավանդման համար առավել համապատասխան պայմաններ:

<u>Ներկայացնեմ մանրանկարչության ուսումնասիրման իմ փորձը:</u>

Մանրանկարչության ուսումնասիրությունը մենք սկսեցինք մատենադարան այցելելությունից: Ձեռագիր մատյանների բնօրինակները տեսնելուց հետո սովորողները ավելի հստակ ու պարզորոշ պատկերացրեցին իրենց անելիքը:Նախ ընտրեցին աշխատանքներ,որոնք ավելի համապատասխան էին իրենց կարողություններին:Այնուհետև պատրաստեցին անհրաժեշտ նյութերը՝ ջրաներկ, գուաշ,մատիտներ, ոսկեգույն ակրիլ և այլն: Հաշվի առնելով աշխատանքի բարդությունը՝ այն բաժանվեց խմբերի մեջ; Աշակերտները աշխատեցին ոչ միայն դասերի ընթացքում,այլև արտադասարանական նկարչական պարապմունքների ժամերին: Քանի որ մանրանկարչության հիմնական հատկանիշներից է թեմատիկ պատկերումը, զարդանկարչական սխեմաների հորինվածքային պարզությունը, մոնումենտալությունը, գույների զուսպ ու միաժամանակ արտահայտչականությունը,այդ պատճառով ուշադրություն դարձվեց նկարի թեմայի բովանդակությանը, որն ինչպես գիտենք հիմնականում աստվածաշնչյան

[4] Աթայան Ռ.Ա., Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան, 1974, էջ 5:

է։ Մի խումբը աշխատեց հիմնականում զարդանախշերի վրա,ձևավորեց խորաններ, անվանաթղթեր, նկարազարդեց գլխատառեր և այլն։Մնացածը աշխատում էին բնության ֆոնի կամ ճարտարապետական հորինվածքների վրա։ Իսկ ավելի օժտված աշակերտները աշխատեցին մարդկային կերպարների՝ դեմքերի արտահայտությունների, դիմագծերի, զգեստների ծալքերի և շարժումների վրա։ Նախանկարն ավարտելուց հետո կատարեցին գունային լուծումները՝ ուշադրություն դարձնելով կարմիրի, կապույտի, կանաչի երանգներին, հատկապես ոսկեգույնին, որը դրվեց ավելի ուռուցիկ մակերևույթով՝ մանրանկարներին ավելի շքեղություն և արտահայտչականություն հաղորդելու նպատակով։ Լավագույն աշխատանքները ընտրվեցինև ցուցադրվեցին հայ գրերին նվիրված միջոցառմանը։

Թեմայի ամփոփման ավարտին սովորողները հասկացան,որ հայկական ձեռագիր գեղանկարչությունը իր բացառիկ ինքնատիպությամբ ,խորաթափանցությամբ և ստեղծագործական ներգրավվածությամբ, կոմպոզիցիոն զարդանկարչական հորինվածքների գեղեցկությամբ, գույների մաքրությամբ և ներդաշնակությամբ, ինչպես նաև կատարման փայլուն վարպետությամբ իր ուրույն տեղն ունի գեղարվեստի համաշխարհային գանձարանում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի ժողովուրդ, խոսակցական լեզվից բացի ունի նաև <<գեղարվեստական>> լեզու: Յուրաքանչյուրի հայի սուրբ պարտքն է լավ իմանալ իր մայրենի լեզուն և ճանաչել ազգային արժեքները: Գեղանկարչությունը կյանքի տարբեր իրավիճակներում մեծ դեր է խաղում,իսկ ձեռագիր արվեստը ևս մի անգամ ապացուցում է հայ ժողովրդի դարավոր անցյալի և հարուստ ժառանգության մասին:

Հանրակրթական դպրոցում երեխաների գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակը համակողմանի և ներդաշնակ զարգացած անձնավորության դաստիարակությունն է, կյանքի և իրականության միջև կապի ստեղծումը: Հանդիսանալով արվեստի ճյուղերից մեկը, կերպարվեստը օգնում է իրագործելու, զարգացնելու երեխաների գեղագիտական դաստիարակությունը:

Մանրանկարչությունը, որպես կերպարվեստի յուրօրինակ բնագավառ,գեղեցիկի զգացողություն է առաջ բերում և զարգացնում նրանց մեջ՝ դրանով լցնում դպրոցական պատանու հոգին, որը սովորեցնում է տեսնել, հասկանալ ու գնահատել գեղեցիկը և վսեմը թե՛ բնության մեջ, թե՛ կյանքում և թե՛ արվեստի բնագավառում, որը մարդու մեջ հակում է առաջ բերում իր ամբողջ կյանքի ընթացքում մշտապես հետաքրքրվելու արվեստի նորանոր արժեքներով և հասնելու գեղեցիկի ավելի նուրբ ու խոր զգացողության և լիակատար ըմբռնման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աթայան Ռ.Ա.,Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը, Երևան,1974:
2. Միքայելյան Համլետ, Գեղագիտական դաստիարակությունը և մաթեմատիկական կրթությունը,«Մաթեմատիկան դպրոցում», Գիտամեթոդական ամսագիր, Թիվ 4(107), 2016, էջ 3-18:
3. Рафикова О. С. Педагогическая поддержка развития самостоятельности младших школьников в процессе эстетического воспитания // Актуальные проблемы гуманитарных и естественных наук. 2011. № 5. С. 167-168:
4. https://grigoryanhasmik.wordpress.com/2021/03/23/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%B6%D5%AF%D5%A1%D6%80%D5%B9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8/
5. https://forum.armedu.am/forum/%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B8%D5%AC%D5%B8%D6%80%D5%BF/%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81/%D5%A4%D5%A1%D5%BD%D5%BF%D5%AB%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%B6%D5%A5%D6%80/2488-%D5%A3%D5%A5%D5%B2%D5%A1%D5%A3%D5%AB%D5%BF%D5%A1-%D5%A3%D5%A5%D5%B2%D5%A1%D6%80%D5%BE%D5%A5%D5%BD%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BD%D5%BF%D5%AB%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
6. http://www.myarmenia.am/manra_am.html

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ



ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ